ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԷՄԻ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻ ՀԵՏ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ

«Ս. ՍԱՀԱԿ- Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆ ԷՄԻԼ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ

Մայիսի 31-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայ Եկեղեցու «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» պատվո բարձր շքանշան շնորհեց ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանին:

Հանդիսությունը բացվեց Տ. Ասողիկ քահանա Կարապետյանի ողջույնի խոսքով: Ապա ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանն անդրադարձավ մեծարյալի կյանքի ուղուն և գործունեությանը՝ ընդգծելով նրա մեծ ներդրումն առողջապահության և բժշկագիտության ոլորտում:

Այնուհետև «Էջ Միածինն ի Հօրէ» շարականի երգեցողության ներքո ներս բերվեց Հայրապետական Սրբատառ Կոնդակը, որն ընթերցեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանը (տե՛ս էջ 35):

Ապա Նորին Սրբությունը մեծարյալի կուրծքը զարդարեց Հայ Եկեղեցու բարձրագույն՝ «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շքանշանով:

Շքանշանների հանձնումից հետո երախտագիտության խոսք ասաց ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանը: Նա իր խորին շնորհակալությունը հայտնեց Վեհափառ Հայրապետին՝ նման բարձր պատվի արժանացնելու համար և ընդգծեց, որ սա իր ստացած պարգևներից մեծագույնն է, ինչը պարտավորեցնում է իրեն այսուհետ առավել մեծ ջանքեր գործադրել ի սպասավորություն Եկեղեցու, Հայրենիքի և ժողովրդի:

Հանդիսությունը փակվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության և գնահատանքի խոսքով: Հանդիսության ընթացքում ելույթ ունեցավ «Շարական» հնագույն երաժշտության համույթը՝ ղեկավարությամբ Դանիել Երաժշտի:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ